


ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան ֆրք 10
Վեցամսեայ " 5
ԿԱՆԻՍԻԿ

20

ՍԱՆԴԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման
Տարեկան ֆրք 12
Վեցամսեայ " 6
ԿԱՆԻՍԻԿ

20

ՍԱՆԴԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶՍԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրահարակույն ճարար օրերը : Ծա-
նուցման տողը 10 Սանդիմ : Եկու թ/ւ ա-
ռաջ հրահարակուած թերթը 40 Սանդիմ :
Զհրահարակուած գրութիւնը եւ յարմիր :

Հասցէ
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNA

ԱԶԳԱՅԻՆ

ԹԵ ՊԵՇԲ Ե ԿՐԵՏԵ ԳԱՂԹԵԼ

Ասկէ առիւ մը առաջ Վառնայէն
Կրէտէ գացող բարեկամը մը գրած նա-
մակին մէկ քանի մասերը արժանի կը
համարինք հրատարակել :

Քաննիս . Յունկր . 31

« Թուականէս 3 օր առաջ հասանք
Քաննիս , Կրէտէի առաջնակարգ քա-
ղաքը , որ մեծ մասամբ հոյ ճարար ե-
ղած է . իսկ չուկան , քրիստոնէից տո-
ները ու մեր Մատուռը բոլորովին քան-
դուած , սեղանին քարերն ա՛նգամ տե-
ղէն հանուած են .

« Անգղիացիին շէնքով շնորհքով հոս
նստած է և ինքը կը կառավարէ . Յոյն
և Տաճիկ ժողովուրդը սարսափելի կեր-
պով կը վախնան անկէ . Թուրքերը Եօր-
կիոս իշխանէն աւելի Անգղիան կ'ուզեն
որ զիրենք կառավարէ , որովհետեւ , շատ
մարդասէր ազգ է կըսեն և որոնք այ-
սօր իրենց գործերուն մէջ 4ին 3ը թուր-
քերը կաշխատցնեն : Բաւական թուրք

երիտասարդներ Անգղիերէն լեզուն սոր-
ված են : Առ այժմ հոս գործ չի կայ ,
բայց ապագային յոյսեր կան , եթէ եր-
կիրը թլանի մտն :

Տեղացի երկու ազգերը քիչ շատ
արհեստաւոր են . բոլոր ժողովուրդը շաշ-
վար կը հագնի և տեղական ձևով կոշիկ
(չիզմէ) , իրենցմէ շատ քիչերը բօթին
կը գործածեն ու ալաֆրանկա կը հագ-
ուին : Ժողովուրդին 100ին 90ը գլուխը
ֆէս կը դնէ , ու սե թաշկինակ մը կը
կապէ . ընդհանրապէս գաղթականներն
են որ գլխարկ կը դնեն :

« Գործ գտնելու համար հոս եկողնե-
րը յուսահատած են . որովհետեւ գործ
չի կայ , թող թէ շատերն ալ արհեստ չու-
նենալնուն պատճառաւ չեն կրնար գոր-
ծել : Սեղանաւորութիւնը կրնայ մեծ
գեր կատարել հոս , որովհետեւ աւարաժ
մը չի կայ : Շնորհքով մանրավաճառու-
թիւն (խուրտավաթ) ընողը կրնայ դը-
րամ շահիլ , ուրիշ մէկ քանի տեսակ
գործեր ալ կան , որոնք նոյնպէս մեծ
գրամագլուխի կը կալօտին . օրինակի
համար , հօթէլ բանալ , իւր յարակից
ճաշարանովը ու սրճարանովը , որովհետեւ
հոս տուներու մէջ պիտեարի սենեակ չեն

տար, եղածները հազիւ կը բաւեն տեղացիներուն, ու օր օրի շատնայու վրայ եղող գաղթականութիւնը պառկելու տեղ մը գտնելու համար շատ դժուարութիւն կը քաշէ:

«Քաղաքիս շուկան 15 օրէ ի վեր բացուած է. անկէ առաջ գոց է եղեր. փախտական յայտերը նոր կը վերադառնան իրենց տեղը, որոնց գոյքերը կողոպտուած, տուններն ու խանութները այրած են:»

«Վառնա, չն հոս զրկուած նամակ մը 15 օրէն կը հասնի:

«Կը վերջացնեմ նամակս, յայտնելով թէ՛ սու այժմ Վառնաէն հոս գալ պատրաստուողները պարապ տեղը յոգնութիւն պիտի առնեն, որովհետեւ տակաւին ԳՈՒՄ 21 ԿԱՅ»:



ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՇՏՈՆ Ի ԼՈՒՏՈՆ (Սրաւիստրի Փետր. 9 թիւէն ֆաղուած)

«Փետրվար 8ին Լոնտոնի Ս. Պետրոսի Անկլիքան Մատրան մէջ հոգեհանգստեան պաշտօն մը կատարուեցաւ ՚ի յիշատակ Նուպար Բաշայի: Պարրի եպիսկոպոսը որ կը նախագահէր, արտօնած էր արարողութեան ձեւն ու հայերէն լեզուի գործածութիւնը: Հայկական այս արարողութիւն սակայն քիչ կը տարբերի Անկլիքան եկեղեցւոյ սովորական հոգեհանգստեան արարողութիւնէն: Ներկայ էին, Լորտեր, Կոմսեր, Դերափոսեր, Դեսպաններ և այլք, որոնք յատկապէս հրաւիրուած էին: Արքայական ճարտարագէտ զօրաց և Կորտոնեան որբանոցին նուագածուաց խումբը արարողութեան երաժշտական մասը կը կազմէին:

Երբ երգեցիկներու խումբն ու կղերը եկեղեցի մտան, «Փառք ՚ի բարձունս Աստուծոյ» երգը երգուեցաւ: Յետոյ սկսան թաղման կարգի աղօթքներն. և ապա Բարիզի հայ մատրան երէցն որ հանգուցելոյն տանե-

րէցն էր, դամբանական մը խօսեցաւ, արդարութեան և մարդասիրութեան վրայ, որք հանգուցելոյն յատկանշերն էին: Յետոյ վերապատուելի Սթիֆըն Վլաստմոն երէց անգլիկէն բարոյեց, բնարան ունենալով «Նա որ մարդոց վրայ կիշխէ, պէտք է արդար ըլլայ և պէտք է իշխէ երկիւղին Աստուծոյ» (Բ. Սաւմոնէ՛յ ժգ. գլ. 3):

«Ամենաբարձր իմաստով արդարութիւնն, ըսաւ, Նուպար Բաշայի կիանքին ու աշխատութիւններուն նշանաւոր դրոշմն էր: Երկար և դժուարին ասպարէզի մը մէջ ջանաց արդարութեամբ ուրիշներն արդար ընելու: Երէցը իր խօսքերը սա բառերով վերջացուց. «Հայք կրնան հպարտանալ իրենց ճշմարիտ և ազնուական ազգակցին անուամբը»:

* *


Ս. Պետրոսի Մատրան երէցն յանուն Կորտոնեան որբանոցի հետեւեալ նամակն ընդունեց որ 200 անգլիական ոսկիի չէք մը կը պարունակեր. — «Տիկին Նուպար խնդրեց ինձմէ ներկայիս ձեզ յանձնել 200 ոսկւոյ նուէր մը յանուն Կորտոնեան որբանոցին, իր և ընտանեաց կողմէ իբրեւ երախտագիտութիւն այսօրուան արարողութեան Ս. Պետրոսի Մատրան մէջ, ՚ի յիշատակ իր ողբացեալ ամուսնոյն:

Կը խնդրէ ինձմէ ըսել թէ խորապէս զգածուած է Անգլիական ազգէն իրեն ուղղուած այս համակրութեան վեհոգի արտայայտութիւնէն, որոյ ակներև ապացոյցն է այս առուօտեան հոգեհանգիստը»

«ՀԱՆՐԻ ՕՐԷՆՀԱՅՄ»

* *

Տիկին Նուպար Բաշայի յայտնած բուն բաղձանաց հակառակ, բժիշկները արգիլել են անոր ուղևորութիւնն յեգիպտոս, որովհետեւ տիկինը դառնապէս զգածեալ հիւանդացած էր:



ՆՈՐ ԳԻՒՏ

ԿԻՍԹԱՎ ԶԷԹԷԻ ՌՄԲԱՆԱԻԸ

Վերջապէս, ահաբեղի և ահագին զրա-
հաւորներն ալ այսուհետեւ իրենց կարեւորու-
թիւնը կը կորսնցնեն և շուտ մը ծովամոյն
կըլլան՝ Վիսթամ Զէթէի հնարած ու ծովուն
տակէն քալող ուժանակին շնորհիւ:

Փորձը յուսացուածէն աւելի յաջող է
եղեր ու ֆրանսացիք շատ գոհ մնացած են:
Այս ուժանակը մորկալից ծովուն տակէն
խիստ արագութեամբ կատարեր է իր ճամ-
բորդութիւնը Թուլունէն մինչև Մարսէյլ, ա-
ռանց ստիպուելու իր ելեկտրական մթերա-
նոցները փոխելու: «Մաճէնթա» անունն ա-
հագին զրահաւորին վրայ յարձակումները
բեր է՝ անոր թէ խարսխի վրայ կեցած եւ
թէ քալած միջոցին, ու ամեն անգամ ուղեւ-
բերը իրենց նպատակակէտին հասեր են: Նա-
ւաստիք եօթը ժամու չափ օդախիտ ու ջրա-
խիտ միջոցի մէջ կրցեր են կայտառ ու զը-
ւարթ մնալ: Հրաշք մը չէ՞ այս:

Այս նաւը՝ հրամանատարին ուղած ա-
տենը անմիջապէս ջուրին տակը կիջնէ կամ
երեսը կելլէ: Ծուռ դիրքով բազմաթիւ հայե-
րիններէ կազմուած և իր առանցքին վրայ զար-
ձող հեռագիտակ մը՝ ծովուն մէջի առարկա-
ներուն պատկերները մինչև հրամանատարին
գտնուած մութ սենեակը կը հասցնէ եղեր:
այս գիտակը՝ նաւուն ջուրին մակերեսը թին
վրայ եղած ատենն ալ կարելի է եղեր ամեն
կողմ՝ դարձնել:

Ամենէն սոսկալին սա է որ, թշնամի զը-
րահաւորները չին կրնար առաջուրնէ կոա-
հել այս ուժանակին իրենց մօտենալը. աս-
կէց գատ, եթէ նաւը իր ուղղութիւնը գտնե-
լու համար ջուրին մակերեսը ելնէ, անմիջա-
պէս ձուկի պէս գարձեալ կը սուզի, որով
կարելի չէ գուշակել թէ երկրորդ անգամ
ո՛ւր պիտի երևնայ իր ուղեւորը արձակելու
համար. հետեւաբար կարելի չէ եղեր թնդա-
նօթի կրակով զայն դիմաւորելու պատրաստուիլ:
միայն թեթեւ հրադէններ կրնան եղեր գոր-

ծածուիլ. և սակայն անոնց գնդակներէն
պաշտպանուելու համար ալ նաւուն գմբեթը
պոյպատէ զրահով մը պաշտպանուած է:

Եթէ այս ուժանակը մինչև իսկ խոր-
տակի, միշտ բաւական ժամանակ կը մնայ ե-
ղեր իր ուղեւորը թշնամին վրայ նետելու:

Կըսուի թէ, ֆրանսական նաւատորմի
որ Անգղիականին քառորդին չափ է, այսու-
հետեւ ոչ միայն անոր հաւասար զօրութիւն
կունենայ, այլ նաև կը գերազանցէ, վասն
զի գիւրին բան չէ՝ չի տեսնուած թշնամի
մը հետ պատերազմելը:


(Ինչ պէտք է զեննկեցութեան համար
առաջարկներ բերել. դիւանագէտները իրաւ
անցունել, ժողովքներ գումարել ևն. որոնցմով
բան մը ըլլալիք չունի. ասանկ մէկ երկու
ահաբեղի և անյաղթելի նոր գիւտեր ալ որ
ըլլան, կառավարութիւնը վերջապէս յուսա-
հատեալ ինքնաբերաբար պիտի ստիպուին
զեննկեցութիւնը գրկելու, որովհետեւ, վերը
յիշուածին պէս, իրաւ դիւրին բան չէ՝ չի
տեսնուած թշնամին դէմ պատերազմ՝ մղել:

Գող բռնկեալ նոր միջոց:— Վաշինկ-
թօնի հնութեանց թանգարանէն քանի
մը անգամ մեծ ու պզտիկ հնութիւն-
ներ գոյցուած ըլլալով, գողերը բռնե-
լու համար հետեւեալ միջոցը գործադ-
րուած է:

Հնութիւնները պահող ապակեայ
չրջանակներու բոլորաիքը հաստատուած
են մագի չափ ելեքդրական թելեր, ո-
րոց ծայրը կ'երթայ կը հասնի պահա-
պաններու յատուկ սենեկայ մէջ գըր-
նուած զանգակներու կոթին: այնպէս
որ, երբ ու է մէկը համարձակի ձեռք
դպչնել դարաններու մէջ գտնուած հը-
նութեանց, նոյն ելեքդրական թելերը
կը շարժին եւ զանգակները հնչելով,
պահապանը շուտափոյթ կը հասնին ձայ-
նին եկած տեղը:



Նախակներ օրինակեցու դիտիկն եւ պարզ միջոց մը:— Բիշ մը շաքար դրէք այն թանաքին մէջ որով պիտի դրէք օրինակուելիք նամակը, գրութեան վրայ դրէք անտուինձ և բարակ թերթ մը թուղթ, վրայէն անցուցէք չափաւորապէս տաքցած արգուկ մը, և անմիջապէս պիտի ունենաք ձեր նամակին հակադարձ մէկ օրինակը:



ԽՈՐԱՄԱՆԿ ՈՍԿԵՐԻՉԸ

Հարուստ Անգղիացի մը, որ կերելի թէ անասնապաշտպան ընկերութեան կը պատկանի, անցեալները Կ. Պոլիս կայցելէ ու ոսկերչաց շուկային մէջ պտըտած ատենը, ոսկերիչի մը կառաջուրէ կէ ծխախոտի արծաթէ տուփ մը շինել, որուն կափարիչին վրայ պէտք է տեսնուի շան մը տնակը և անոր առջև արծաթեայ շուն մը, որ զինքը (անգղիացին) տեսնելուն պէս իր տնակը փախչի:

Ոսկերիչը, որ մինչև այն ատեն առանկ արտառոց ապսպրանք մը լսած չէր, կը սկսի ծիծաղիլ, մինչդեռ Անգղիացին անխռով կը կենայ. նոյն միջոցին ուրիշ բայց խորամանկ ոսկերիչ մը խօսքի կը խառնուի ու հպարտանօք, «ես կրնամ շինել այդ տուփը» կըսէ: Սակարկութիւնը կը լմնայ:

Բանի մը օր անցնելէն ետքը Անգղիացին կուգայ տուփը առնել, զոր ոսկերիչը շինած լմնացած էր, վրան ալ շունին տնակը փորագրուած:

Անգղիացին շաք կը հաւնի, բայց կը հարցնէ թէ ո՞ւր է շունը:

— Բեզ տեսաւ նէ՛ ներս փախաւ,

կը պատասխանէ ոսկերիչը հանդարտութեամբ:

Անգղիացին՝ ոսկերիչին այս պատրաստաբանութենէն չկրնար ծիծաղը բռնել, ու վճարելով տուփը կառնէ կերթայ:

Երկու բարեկամք

— Բիշ մը առաջ եղածը զօրաւոր երկրաշարժ մ'էր, այնպէս չէ՛:

— Ի՞նչ կըսիք, երկրաշարժ եղաւ... ես չըզգացի:

— Ձի տեսա՞ք որ ժողովուրդը եկեղեցիէն դուրս կը փախչէր:

— Այո՛, այդ տեսայ, բայց կարծեցի թէ՛ զանձանակ պտտցունելու ատեն ըլլալով, կծիկը կը գնեն կոր...

Հայր մը իր ութ տարեկան մանչը իրենց տունը այցելող եկեղեցականին ներկայացնելով. — Յակոբ, հայր սուրբին ըսէ թէ երբ մեծնաս, ի՞նչ ըլլալ կը փափաքիս:

Յակոբ. — Կուզեմ իրեն պէս եկեղեցական դառնալ:

Եկեղեցականը պզտիկին պատառխանէն դո՛հ մնացած. — Ո՛հ, իմ պզտիկ բարեկամս, կ'ուզես եկեղեցական դառնալ, այնպէս չէ՛. բայց ըսէ՛ թէ ինչո՞ւ ինծի պէս եկեղեցական կը փափաքիս ըլլալ:

Յակոբ. — Որովհետեւ անցեալ իրիկուն հայրս ճաշի ատեն մօռս կըսէր թէ իր ճանչցած մարդոց մէջ ամենէն աղւոր կեանք մը վարող կայ նէ, այն ալ դուք էք... գործ մը չէք ըներ, միայն թէ կիրակի կամ մեռել պատահած օրեր մէկ երկու ժամ կը քարոզէք եղեր... ժողովուրդին հանգանակութեամբը կ'ապրէք եղեր... թաղին կիներէն ալ՝ — թիթեղէ շինուած, չորս անիւի վը-

րայ հաստատուած չինական չաստուածի մը պէս — կը յարգուիք եղեր . . .

Պարտապահանջ մը իր պարտկանին սենեակը հանդիպելով. — Սա մեր պզտիկ հաշիւը երբ պիտի կարգադրէք .

— Օհ, շատ լաւ . . . խնդրեմ, եկող շաբաթ նորէն հանդիպեցէք .

— Բայց այն ատեն պիտի վճարէ՞ք .

— Շիտակը չեմ կրնար խոստանալ . . . բայց եթէ գալու ըլլաք, ձեզի կրնամ ըսել թէ ո՞ր ատեն նորէն հանդիպելու էք . . .

ՊԱՇՏՈՆԷ ԽՈՑՍ ՏՈՒՈՂ ԹԱՂԱԿԱՆՆԵՐ

Պուկարաբնակ ազգայնոց բարքերուն լաւատեղեակ անձնաւորութիւն մը ասկէ մէկ քանի ամիսներ առաջ կըսէր թէ, « Տաճկաստան եղածին պէս, հոս ալ ազգայնոց մէջ թաղական ըլլալու կամ երկար ատեններ թաղական մնալու սատիկ մարմաջ մը կայ, բայց ի Վառնայէն, ուր տեղի ազգայինք թաղականութենէ կը խորշին ու եկեղեցին տարիներով առանց թաղ խորհուրդի կը ձգեն »:

Շիտակը, այն ատեն մենք այս խօսքերուն չուղեցինք հաւատալ, մտածելով թէ, կարելի՞ բան է որ Վառնայի ազգայինք խոյս տան թաղականութեան պաշտօնէն, որ ամեն տեղի հայտ համար նախարարական պաշտօնի պէս բան մը կը համարուի. բայց այսօր կը խոստովանինք թէ, ինչպէս ամեն կանոն իր զարտուղութիւնը ունի, թաղ խորհրդոյ անդամ ըլլալու մարմաջն ալ Վառնայի հայոց համար իր զարտուղութիւնը ունի եղեր: Օրինակը աչքի առջև է. 3—4 ամիսներէ ի վեր ընտրուած թաղ խորհուրդը պաշտօնէ խոյս տալու քաղաքականութիւն մը բռնած ըլլալով, եկեղեցիին առանց թաղական խորհուրդի մնացած է:

Այս մասին մէջ բերուած պատճառ-

աբանութիւնները կարծէ որ հոս արձանագրենք.

— Բարե Գրաբոս աղա .

— Աստուծոյ բարին բարեկամ.

— Քուէից բացարձակ առաւելութեամբ թաղական ընտրուած էք. ինչո՞ւ չէք ընդուներ այդ պաշտօնը .

— Եղբայր, գործերուս չատուծինը ու մանաւանդ, ունեցած անձնական տկարութիւնս կարգիլեն զիս այդ պաշտօնը խղճի մտօք կատարելու .

— Բայց . . .

— Կաղաչեմ, բայց մայց չուղեր, ա՛լ այդ կէտին վրայ մի՛ ծանրանաք, որոշումս որոշում է. թաղականութիւնը ինծի համար չէ, մնաք բարով:

Ու կառնէ կը քալէ:

* *

— Բարե Պողիկտոս աղա .

— Աստուծոյ բարին .

— Դուք ինչո՞ւ չէք ընդուներ թաղականութեան պաշտօնը .

— Որովհետեւ . . . չիտակը կ'ուզե՞ս գաղափարակից մը չունիմ.

— Ինչո՞ւ, այսինչը, այնինչը գէ՛շ մարդիկներ են:

— Աղէկ մարդիկներ են, բայց չեն կրնար ինծի գաղափարակից ըլլալ. ես կ'ուզեմ կտրուկ քաղաքականութեան մը հետեւիլ, երկար բարակ ժողովքներու, «խօսք կուզեմ խօսք կուտա՛ն»ով ժամաւաճառ ըլլալու հարկ չեմ տեսներ, «ասաց և եղևի» գրութիւնը կ'ուզեմ, կարծեաց փոխանակութիւն կամ գիտողութիւն ըսուած բաները ջիզերուս կը դըպչին .

— Բայց ձեր այդ ըսածը գիկտատորութիւն ըսել է .

— Մարդու պէս գործ տեսնելու համար այս գրութիւնը պէտք է, ապա թէ ոչ կալ զիս հրաժարեալ:

* *

Հաճի պէյ, դուք ինչո՞ւ չէք ընդունիր թաղականութեան պաշտօնը.

— Էֆէնտիմ, ամենէն առաջ ազգին ունեցած սա պարտքը տրուելու է որ ես ալ այդ պաշտօնը ընդունիմ.

— Ատ ի՞նչ ըսել է, միթէ ազգին պարտքը արգելք կրնայ ըլլալ քու թաղականութեանդ.

— Այո, ատոր դիմու ցաւը ո՞վ մերիկ պիտի ընէ, ո՞վ պիտի վճարէ:

— Դուն քու քրակէդ չպիտի վճարես եւ. մինակ պէտք եղած ատենը կրնաս մէկ երկու խօսք ընել պարտապահանջին, կամ այդ պարտքը տալու մասին միջոցներ խորհիլ քու ընկերակցացդ հետ:

— Ինչ կըսես, եղբայր, ես իմ պարտապահանջիս չեմ կրնալ կոր խօսք հասկըցնել, ազգէն առնելիքս որը ինտոր պիտի համոզեմ. ես թաղական կըլլամ սապայմանաւ որ, ազգը փարա մը պարտք ունեցած ըլլալու չէ. խորհրդարանը նշտած ատենս «կուզեմ» ճինեբու երեսը տեսնել չեմ ուզեր.

— Ատանկ թաղականութիւնը մա. միկս ալ կ'ուզէ:

— Ուրեմն դե՛ս մամիկդ թաղական ընտրէ:

* *

— Սիօս աղա, սա քու թաղականութենէ հրաժարելուդ մէջ ամենեւին յօժիք ըսուած բանը չի կայ. փառք աստուծոյ, դործդ կարգին է, կրնաս շարաթը մէկ երկու օր թաղական խորհրդարանը գտնուիլ ու...

— Աստուած չընէ որ ասկէ ետքը ատանկ պաշտօն մը ստանձնեմ:

— Ինչո՞ւ:

— Եղբայր, բացէ՛ի բաց գող ես կըսեն կոր.

— Կաւեւորութիւն տալու չէ՛, էֆէնտիմ,

— Անգամ մը ընդունեցանք ու նոր բալթօ մը հադանք նէ՛ եկեղեցիին գըրամովը շինեք է ըսին.

— Ապուր ե՛ն կերեր. ամեն թաղականի համար ալ ատանկ կըսեն, բայց ո՞վ կարևորութիւն կուտայ. միայն թէ, դուն ալ այդ ըսած բալթօդ՝ պաշտօնի վրայ եղած ատենդ չինելու չէիր, ինչ ո՞ր է, ան առջի ըսածնին սրբագրելու համար նորէն զքեզ ընտրեցին՝ ընդունելու ես.

— Ես եազար պօղար թէֆթէրի չեմ որ մէյ մը շինեն մէյ մը աւրեն, աժեմին չաժեմին քննադատականները մտիկ ընելու ժամանակ չունիմ:

— Հոգ չէ՛, Սիօս աղա, ի՞նչ ընենք:

— Ձէ՛, երդում ըրած եմ. թող առանց թաղականի մնան որ խելքերնին գլուխնին գայ. Ըզպօկում:

* *

Ձէնօն աղա, դուն ինչո՞ւ չես ընդունիր կոր սա թաղականութիւնը.

— Եղբայր, որո՞ւ հետ պիտի ընեմ, մարդ չի կայ.

— Մարդ չի կայ մի՛. . . աս ընտրուածները ի՞նչ են.

— Մարդ են, բայց չեն կրնար ինծի հետ պաշտօնաւարել. այսինչը եւ այսինչը չեմ ճանչնար. այսինչին հակակարծիք եմ, այսինչին հետ պաշտօնավարելն ալ արժանապատուութեանս դէմ նախաաինք մը կը համարիմ. էյ, անդին մարդ չի մնաց:

— Ձըսե՛ս քեզի համար ալ Պոլսոյ Ուզուն չարչըէն փայտէ մարդիկներ քաջել տալու բերելու է որ կարենաս հետերնին վարուիլ. ծառայ եմ:

— Տէր ընդ ձեզ:

Ահա այս պատճառներով տեղւոյս եկեղեցին առանց թաղական խորհուրդի կը մնայ

Բոժ. — Եւ ուղածնուն պէս կրնան ճիշիս խաղալ թաղականներն ու մոմակալները:

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱՅԵՆԻ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱՀԱՆՐԻԷՍԻ

Գ. ՏԱՐԻ

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԿԱՐԴԱԼ Ա. ԵՐԵՎԱՆ

ՄԵԾ ՎԻՃԱԿԱՅԱՆՈՒԹԻՒՆ

Ե.	"	"	2	87 1/2
Զ.	"	"	2	2 1/2
				14 40



ՍՕՅԻԱ ԲԱՆԿԻ

ՊՈՒԼԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Երաշխատուեալ

Ա. ՊԱՐԳԵՒՆ Է 500.000 ԺԻ. ՈՍԿԻ

50.000 տոմսեր հրապարակ հանուած են, որոնց 25.000ը պիտի շահին հետեւեալ կարգաւ.

1898 Դեկտ.	10ին	1500	Թիւեր
1899 Յնվր.	7ին	1500	"
" Փետր.	4ին	2000	"
" "	26ին	"	"
" Մարտ	19ին	"	"
" Ապր.	12ին	16.000	"

Մէկ տիւրորդ տոմսակին դինն է, Ոսկի Լէվ Ս/Ժ.

Ա. ամսոյ	Համար	1	25
Բ. "	"	1	75
Գ. "	"	2	87 1/2
Դ. "	"	3	62 1/2

Ասոնցմէ զատ կը գտնուին նաև քառորդ, կէս և ամբողջ տոմսեր, որոնցարժէքները համեմատաբար կաւելնան.

Կենտր. և մանրամասն տեղեկութեանց համար պէտք է դիմել սեղանաւոր Տ. Սարգիս Գարբիէլեանի, Վառնա, Մուսալլա:



ԳՈՒՇԱԿ
Ա. ՊԱՐԳԵՒՆ

Կամ Զուարճալի Բաղդադցոյ
Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց ըզբօնալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մէկ Փրանքի, թղթատարի ծախքով գիմել խմբագրութեան:

ОТГОВОРНИКЪ М. СКОНОВЪ

Печанница "Взаимность" — Варна.